


Մոնոպոլիստական մրցակցության շուկայում առևտրի հավասարակշռության գրաֆիկական վերլուծությունը

Նախապայմաններ

1. Մոդելը վերաբերում է որևէ X ապրանքի արտադրության ճյուղին:
2. Ճյուղի յուրաքանչյուր ձեռնարկություն արտադրում է X ապրանքի միայն մեկ տարբերակ: Այդ տարբերակները թեպետ միմյանց նման են, բայց նույնական չեն: Այսինքն՝ ձեռնարկությունները թողարկում են տարբերակված արտադրանք (յուրաքանչյուր արտադրող մենաշնորհ ունի իր տարբերակի արտադրությունում):
3. Ճյուղում առկա են բազմաթիվ ձեռնարկություններ: Բոլոր ձեռնարկությունները նույնական են. այսինքն՝ ունեն միևնույն ծախսերը և պահանջարկը:
4. Արտադրության ծախսերը դրսևորում են ծավալի աճող էֆեկտ: Սահմանային ծախսը հաստատուն է:
5. Շուկա մուտքի և ելքի արգելքներ չկան, ուստի՝ երկարատև հավասարակշռությունում տնտեսական շահույթը զրո է:
6. Սպառողները բազմազանությունը նախընտրում են:

Ավտարկիայի կարճաժամկետ հավասարակշռություն



Շահույթի առավելարկման $MR_1 = MC$ կետում թողարկումը Q_1 է, իսկ համապատասխան գինը՝ P_1 : Ավտարկիայի կարճատև հավասարակշռության A կետում գինը գերազանցում է միջին ծախսին ($P_1 > AC_1$), ուստի՝ ձեռնարկությունները ստանում են տնտեսական շահույթ:

Ավտարկիայի երկարաժամկետ հավասարակշռություն


Տնտեսական շահույթը խթանում է ճյուղ նոր ձեռնարկությունների մուտքը: Արդյունքում՝ յուրաքանչյուր ձեռնարկության պահանջարկի կորը.

(1) դառնում է ավելի առաձգական, քանի որ ապրանքի մոտ փոխարինիչների թիվն ընդլայնվել է, և սպառողները դարձել են ավելի զգայուն գնի փոփոխության նկատմամբ,

(2) տեղաշարժում է ձախ (D_1 -ից D_2), մինչև տնտեսական շահույթը չեզոքանում է:

A կետում ճյուղը երկարատև հավասարակշռությունում է, քանի որ ձեռնարկության պահանջարկի կորը շոշափում է միջին ծախսերի կորին: Ճյուղ ձեռնարկությունների հետագա մուտք կամ ելք տեղի չի ունենում: D_1 ձեռնարկության կարճաժամկետ, D_2 երկարաժամկետ պահանջարկի կորն է:

Երկարաժամկետ հավասարակշռությունում յուրաքանչյուր ձեռնարկության թողարկումը Q_2 է (այդ կետում $MR_2 = MC$): Միննույն ժամանակ, երկարատև հավասարակշռությունում ճյուղի բոլոր ձեռնարկությունները սահմանում են միննույն գինը՝ $P_2 = \bar{P}$ (որը հավասար է միջին ծախսին):



Նկատենք՝ D_2 կամ D_1 արտահայտում են ձեռնարկության պահանջարկն այն դեպքում, երբ ձեռնարկության գնի փոփոխության դեպքում ճյուղի բոլոր մյուս ձեռնարկությունները գինը պահում են հաստատուն (այսինքն՝ D_2 կամ D_1 ձեռնարկության պահանջարկն են այլ հավասար պայմաններում):

Ճյուղի ընդհանուր իրացումը նշանակենք S , իսկ ավտարկիայում ճյուղի ձեռնարկությունների թիվը՝ n : Ճյուղի իրացման և ձեռնարկությունների թվի հարաբերությունը՝ S/n , հավասար է մեկ ձեռնարկության իրացմանը այն դեպքում, երբ ճյուղի ընդհանուր իրացումը հավասարաչափ բաշխվել է բոլոր ձեռնարկությունների միջև: Նման հավասարաչափ բաշխում տեղի է ունենում այն դեպքում, երբ բոլորը սահմանում են միննույն գինը ($P_2 = \bar{P}$):

Այսպիսով՝ S/n կորն արտահայտում է ձեռնարկության պահանջարկը, երբ ճյուղի բոլոր ձեռնարկությունները սահմանել են միննույն գինը (այսինքն՝ S/n կորը ձեռնարկության պահանջարկն է այն դեպքում, երբ ձեռնարկության գնի փոփոխության դեպքում բոլոր մյուս ձեռնարկությունները գինը փոխում են համաժամանակորեն և նույն չափով):

D_2 և S/n կորերն անցնում են միննույն B կետով, քանի որ դա միաժամանակ և՛ երկարատև հավասարակշռության կետն է, և՛ ընդհանուր իրացման հավասարաչափ բաշխման կետն է: Երկու դեպքում էլ, բոլորի գինը նույնն է՝ $P_2 = \bar{P}$:


D_2 առավել հարթ (առաձգական) է, քան S/n կորը հետևյալ պատճառով: B կետից սկսած, երբ ձեռնարկությունը նվազեցնում է գինը, ապա նրա իրացումն ընդլայնվում է D_2 կորի երկայնքով: Ձեռնարկության իրացումն ընդլայնվում է S/n կորի հինգից գնի նվազման, և՛ նաև այլ արտադրողների հաշվին: Բայց երբ բոլոր մյուս ձեռնարկությունները նույնպես գինը միաժամանակ նվազեցնում են, ապա յուրաքանչյուրի պահանջարկն ընդլայնվում է S/n կորի երկայնքով: Այդ դեպքում իրացման աճը փոքր է, քանի որ այդ աճը միայն հինգից գնի անկման հետևանք է:

Ազատ առևտրի կարճաժամկետ հավասարակշռություն

Համարենք՝ երկու միանման երկրներ ազատականացնում են փոխադարձ առևտուրը: Ավտարկիայում յուրաքանչյուր երկրում առկա էր n ձեռնարկություն: Առևտրի ազատականացումից հետո յուրաքանչյուր սպառողին հասանելի ապրանքի տարբերակների թիվը կկրկնապատկվի:

Արդյունքում՝ յուրաքանչյուր ձեռնարկության պահանջարկը կդառնա էլ ավելի առաձգական (D_2 -ից D_3 , որտեղ D_3 -ը ձեռնարկության պահանջարկի նոր կորն է):

Այսինքն՝ եթե որևէ ձեռնարկություն այժմ գինը նվազեցնում է, ապա ակնկալելի է, որ նրա իրացումը կընդլայնվի ավելի մեծ չափով, քան նախկինում, քանի որ նախկինում նա կարող էր գրավել միայն հայրենի սպառողներին, իսկ այժմ՝ նաև արտերկրի սպառողներին:



D_3 այլևս չի շոշափում միջին ծախսերի կորը, և P_2 -ից ցածր գների դեպքում գերազանցում է միջին ծախսին: D_3 -ին համապատասխանում է MR_3 սահմանային հասույթի կորը:

Ձեռնարկություններից յուրաքանչյուրն իր շահույթը կառավելարկի, եթե թողարկի Q_3 քանակ (որում $MR_3 = MC$) և սահմանի P_3 գին: B -ում, ի տարբերություն A -ի, տնտեսական շահույթը դրական է, ուստի՝ բոլոր ձեռնարկությունները կձգտեն գինը P_2 -ից P_3 նվազեցնելու միջոցով շահույթ ստանալ:

Բայց քանի որ գինը բոլորն իջեցնում են միաժամանակ, ապա յուրաքանչյուրը տեղաշարժվում է ոչ թե D_3 , այլ S/n կորի երկայնքով: Արդյունքում՝ սահմանելով P_3 գին, բոլորը

հայտնվում են ոչ թե C, այլ F կետում: Այսինքն՝ յուրաքանչյուրի իրացումն ընդլայնվեց ոչ թե մինչև Q_3 , այլ մինչև Q^* :

F կետում գինը միջին ծախսից ցածր է: Արդյունքում, թեպետ բոլորն ակնկալում էին տնտեսական շահույթ ստանալ, բայց կրեցին տնտեսական վնաս:

Ազատ առևտրի երկարաժամկետ հավասարակշռություն


Նշանակենք n^* -ով ճյուղի ձեռնարկությունների թիվը առևտրի ազատականացումից հետո:

$$n^* < n \Rightarrow S/n^* > S/n$$

Տնտեսական վնասի պատճառով որոշ ձեռնարկություններ ճյուղից դուրս կգան: Ճյուղից ձեռնարկությունների ելքը բնական է, քանի որ ճյուղի ընդհանուր իրացումը չի փոխվել, ու երբ յուրաքանչյուրը ցանկանում է ավելի շատ իրացնել, ապա դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ ոմանք ճյուղից դուրս մղվեն:

Ճյուղում մնացած ձեռնարկությունների համար պահանջարկի կորերը (և՛ D_3 , և՛ S/n) կտեղաշարժվեն աջ: Մինևույն ժամանակ, սպառողներին հասանելի տարբերակների թիվը կկրճատվի, և յուրաքանչյուր ձեռնարկության պահանջարկի կորը կդառնա նվազ առաձգական:

S/n^* կորն ավելի աջ է, քան S/n կորը: Երկարատև հավասարակշռությունը G կետում է, որում ձեռնարկության պահանջարկի D_4 կորը շոշափում է միջին ծախսերի AC կորին: Այդ կետին համապատասխանող թողարկումը՝ Q_4 , առավելարկում է շահույթը, քանի որ $MR_4 = MC$:



Չնայած որոշ ձեռնարկություններ ճյուղից դուրս եկան, բայց ճյուղում մնացած բոլոր ձեռնարկությունների թիվը՝ $2n^*$, ավտարկիայի անհատական հավասարակշռությունից մեծ է $2n^* > n$:

Քանի որ ապրանքների բազմազանությունն ընդլայնվել է, ապա սպառողների բարեկեցությունն ազատ առևտրի արդյունքում բարելավվել է: Մինևույն ժամանակ,

բազմազանության աճի հետևանքով սպառողները դարձել են առավել զգայուն գնի նկատմամբ, ուստի D_4 ավելի առաձգական է, քան D_2 :

Ազատ առևտրի երկարաժամկետ հավասարակշռության G կետում յուրաքանչյուր ձեռնարկության գինն ավելի ցածր է, քան ավտարկիայում էր ($P_4 < P_2$), իսկ թողարկումն ավելի մեծ է ($Q_4 > Q_2$):

Դրանով իսկ, սպառողների բարեկեցությունը բարելավվել է և՛ տեսականու ընդլայնման, և՛ գնի անկման շնորհիվ: Գնի անկումը հետևանք է նրա, որ թողարկման աճին զուգընթաց դրսևորվում է ծավալի աճող էֆեկտը (արտադրողականությունն աճում է):